ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Զի ուղիղ են ճանապարհք Տեառն, եւ արդարք գնասցեն ընդ նոսա, եւ ամբարիշտք տկարասցին ի նոսա»:
(Ձեռնադրության Մաշտոց)

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գարեգին Ա. Կաթողիկոսի բարձր կարգադրությամբ սույն թվականի հոկտեմբերի 21 և 22, շաբաթ և կիրակի օրերը, ևս մեկ անգամ հոգևոր ուրախության և մխիթարության պահեր եղան մեր Եկեղեցու հավատացյալների համար: Հանդիսավոր պատարագի արարողության ընթացքում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ինը շրջանավարտներ՝ **Սամվել Հովակիմյանը, Արամ Հովհաննիսյանը, Հովհաննես Մարտիրոսյանը, Մուշեղ Ժորոյանը, Գարուն Մնացականյանը, Եսայի Կարապետյանը, Արմեն Խաչաթյանը, Արամ Վարդանյանը, Հարություն Փիլավչյանը,** ձեռամբ իրենց նախկին տեսուչ, Ս. Հռիփսիմե վանքի վանահայր Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ստացան սարկավագական աստիճան:

Համաձայն մեր Եկեղեցու Ձեռնադրության Մաշտոցի, նախորդ շաբաթ օրը, երեկոյան, կիրակնամտի ժամերգության ավարտին, սարկավագության կոչվածները ստացան կիսասարկավագության կարգ՝ ձեռամբ Անանիա եպիսկոպոսի և խարտավիլակությամբ՝ Ռուսիայի հայոց առաջնորդական փոխանորդ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանի:

Սարկավագական ձեռնադրության ընթացքում խարտավիլակ Հայր Սուրբը Մաշտոցի համաձայն վկայում է նորընծաների հոգևոր բարեմասնությունները և ձեռնադրության արժանի լինելը՝ ասելով. «...գիտեմք եւ վկայեմք զսոսա արժանաւոր գոլ առ ի բառնալ զլուծ աստիճանաց ունելով սրբութիւն եւ իմաստութիւն»: Այս վկայության հիման վրա ձեռնադրող Սրբազան Հայրը «Ծնորհիւք Աստուծոյ Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» նորոնձեռնադրյալներին դպրության աստիճանից հրավիրում է սարկավագության պաշտոնի:

Նորընծա սարկավագները, խարտավիլակի առաջնորդությամբ, ձախակողմյան աստիճանով ծնրադիր բարձրանում են Ավագ խորան, ապա, դառնալով դեպի հավատացյալ ժողովուրդը, ձեռամբարձ **«Աստուածային եւ երկնային շնորհ...»** շարականի երգեցողությամբ հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «ի սպասաւորութիւն Սրբոյ եկեղեցւոյ»: Նորընծաները բոլորվում են ձեռնադրող Սրբազան Հոր շուրջ, իսկ Սրբազանն իր աջը նրանց գլխին դնելով արտասանում է. «Տէր Աստուած ամենակալ ձգեա զաներեւոյթ աջ քո եւ օրհնեա զսոսա արժանաւոր լինել կոչման սպասաւորութեան Ս. Եկեղեցւոյ» աղոթքը: Ձեռնադրող Սրբազանը մեկ առ մեկ ընծայյալների ձեռքերում է դնում Ս. Ավետարանը՝ իշխանություն տալով նրանց եկեղեցում Ս. Ավետարանը հանդիսավորապես ընթերցելու: Ապա բուրվառ է տալիս նրանց ձեռքերը և իշխանություն՝ խնկարկելու եկեղեցում հընթացս ծիսական արարողությանց:

Հավարտ ձեռնադրության արարողության, Վեհափառ Հայրապետն իր ոգեշունչ հայրական խոսքն է ուղղում նորընծա սարկավագներին: Իր օրհնությունը բաշխելով՝ Վեհափառը հույս է հայտնում, որ իրենք հետ այսու առավել բարձր կպահեն հայ հոգևորականի սուրբ և նվիրական կոչումը և իրենց գործունեությամբ առավել ևս կարժևորեն Մայր Եկեղեցու և հայրենիքի ծառայության իրենց բաժինը:

Ապա Վեհափառ Հայրապետը, ողջունելով, իր խոսքը ուղղում է համայն Սփյուռքից Ս. Էջմիածին ուխտի եկած և ս. պատարագին ներկա գտնվող Հաճնցիների Հայրենակցական Միության անդամներին: Վեհափառը՝ բարձր գնահատելով Հաճնի պաշտպանության համար զոհված հայորդիների հայրենասիրությունն ու անձնազոհությունը՝ անձամբ նախագահեց հոգեհանգստյան արարողությանը, որ կատարվեց հավարտ ս. պատարագի՝ ի հիշատակ Հաճնում զոհվածների:

Ս. պատարագի ավարտին նորընծա սարկավագներին Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը, իր հայրական թելադրություններն արեց նորընծաների հառաջիկայի կյանքի և գործի բարվոք պտղաբերման համար:

ԱՐՏԱԿ ԱԲՂ. ՏԻԳՐԱՆՅԱՆ